

ՀՀ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՄԻՍԻԱՆԻ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

**ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ
ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑՉԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ**

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**ԹԵՄԱ՝ «Միջառարկայական կապերի կիրառման ազդեցությունը սովորողների
մետաճանաչողության վրա:»**

ԱՌԱՐԿԱ՝ Աշխարհագրություն

ՀԵՂԻՆԱԿ՝ Խոսարովյան Սոֆյա

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ Սիսիանի հ. 1 հիմն. դպրոց

ՂԵԿԱՎԱՐ՝ Առուստամյան Օֆիկ

Բովանդակություն

Ներածություն.	3
1. Միջառարկայական կապերը որպես մանկավարժական հիմնախնդիր. . .	4
2. Միջառարկայական կապերի ստեղծման դերը սովորողների ուսումնառության գործընթացում.	9
3. Միջառարկայական կապերի ստեղծման հնարավորությունը աշխարհագրության դասի շրջանակներում.	12
4. Դասի պլան.	15
Եզրակացություն.	22
Գրականության ցանկ.	24

Գիտելիքը գրահ է բոլոր դժբախտությունների դեմ:

Ռուդարի

Ներածություն

Միջառարկայական կապերը մեր ժամանակներում մեծ դեր ունեն առարկաների և գիտությունների շարունակական զարգացման գործում: Ուսուցման գործընթացում կարևոր տեղ պետք է հատկացնել միջառարկայական կապերին, որոնք ուսուցման հաջողության անհրաժեշտ պայմաններից են: Միջառարկայական կապերի մասին Յ.Ա.Կոմենսկին իր «Մեծ դիդակտիկա» աշխատությունում նշում է, որ ուսումնական առարկաների փոխկապակցված ուսուցումը երեխաներին սովորեցնում է բացահայտել ուսումնասիրվող առարկաների և երևույթների միջև եղած կապերը. «Ամեն ինչ ամրապնդել բանականության հիմունքներով նշանակում է ամեն ինչ սովորել՝ մատնացույց անելով պատճառները, այսինքն՝ ոչ միայն ցույց տալ, թե ինչպես է այս կամ այն բանը տեղի ունենում, այլ նաև ցույց տալ, թե ինչու դա այլ կերպ լինել չի կարող:

Դպրոցում դասավանդվող յուրաքանչյուր առարկա սովորողի համար դառնում է ավելի գրավիչ, եթե այն սերտորեն կապվում է բնության, շրջապատող աշխարհի և հասարակական կյանքի հետ: Հանրակրթական դպրոցի գործող ծրագրերում և չափորոշիչներում հատուկ ուշադրություն է դարձվում ուսումնական գործընթացի այնպիսի կառուցմանը, որը ապահովում է ոչ միայն գիտելիքների ձեռքբերումը, այլ նաև սովորողների մոտ առարկաների, երևույթների ընկալման, վերլուծման, ընդհանրացման գործընթացների ձևավորումը և, ամենակարևորը, գործնականում այդ գիտելիքների կիրառումը:

Հետազոտության թեմայի արդիականությունը: Մեր ուսումնասիրության արդիականության համար հիմք է հանդիսացել ուսումնական գործընթացում

միջառարկայական կապերի ստեղծման միջոցով սովորողներին
մետաճանաչողական կարողություններով զինելու անհրաժեշտության և
կարևորության շեշտադրումը:

Հետազոտության նպատակը: Յույց տալ դասի ընթացքում ուսուցչի կողմից
միջառարկայական կապերի ստեղծման նշանակությունը սովորողների
մետաճանաչողության և մի շարք այլ կարողունակությունների զարգացման համար:

Հետազոտության խնդիրը: Հետազոտության խնդիրն է ցույց տալ
միջառարկայական կապերի ստեղծման, ինտեգրված դասերի օգնությամբ
սովորողների մետաճանաչողության զարգացման եղանակներն ու ուղիները:

1. Միջառարկայական կապերը որպես մանկավարժական հիմնախնդիր

Միջառարկայական կապերն ազդում են ուսումնական առարկաների
բովանդակության և կառուցվածքի վրա: Յուրաքանչյուր ուսումնական առարկա
հարակից առարկաների համար միջառարկայական այս կամ այն տեսակի կապերի
աղբյուր է: «Միջառարկայական կապերը կարելի է դիտարկել որպես 4
առարկայական ուսուցման համակարգի անհրաժեշտ տարր, քանի որ առարկաները
և նրանց հարաբերությունները չեն կարող հակադրվել միմյանց:

Վերջին տարիներին մեր երկրում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական
փոփոխությունները հանգեցրել են կրթական համակարգի արմատական նորացման
անհրաժեշտության: Աշխարհում տեղի ունեցող արագ փոփոխությունների ֆոնին
Հայաստանի Հանրապետության զարգացման ներկա փուլում կրթության
արդիականացումը դառնում է հասարակության տնտեսական և սոցիալական
առաջընթացի անհրաժեշտ գործոններից մեկը: Կրթական քաղաքականության
գլխավոր խնդիրը հասարակության և պետության ժամանակակից պահանջներին
համապատասխան կրթության որակի ապահովումն է: Կրթության ոլորտում տեղի
ունեցող բարեփոխումները չեն կարող չազդել կրթական գործընթացի վրա, որին
ներկայացվող պահանջներից են ստացած գիտելիքի գիտակցվածությունն ու
կիրառելիությունը:

Ժամանակակից հանրակրթական դպրոցի հիմնական խնդիրը
համընդհանուր գիտելիքների, հմտությունների, դիրքորոշումների և արժեքների
ամբողջական համակարգի ձևավորումն է դպրոցականի, շրջանավարտի, ավագ

դպրոցականի մոտ, ինչը հնարավոր չէ իրականացնել ուսուցման գործընթացում առանց միջառարկայական կապերի հաստատման: Հասարակությունը մարդու նկատմամբ առաջ է քաշում և ներկայացնում շատ նոր պահանջներ, առաջին հերթին մշտական ինքնակրթության, մտավոր զարգացման, մտածելու և ստեղծագործելու ունակության պահանջ, համեմատելու, քննադատաբար խնդրին մոտենալու, վերլուծելու, արժևորելու կարողություններ: Այս հատկանիշներից շատերը կարելի է զարգացնել դպրոցներում ավելացնելով տարբեր հիմնարար առարկաների միջառարկայական, ներառարկայական ու վերառարկայական կապերը, ներդնելով ինտեգրված դասեր, օգտագործելով համակարգչային տեխնոլոգիաներ, առաջնային դարձնելով մանկավարժի ցանկությունը երեխային սովորեցնել աշխարհը տեսնել ամբողջական, այլ ոչ թե առանձին տեղեկությունների և պատկերացումների մասնատված, որոնք միմյանց հետ չմիավորվելով, ժամանակի ընթացքում հեշտությամբ մոռացվում են և չեն նպաստում շրջակա իրականության իրական պատկերը ստեղծելու կարևոր գործին: Անհրաժեշտ է փնտրել նորարարական միջոցներ և ուսուցման մեթոդներ: Ավագ դպրոցականի կրթության որակի, ուսումնառության մակարդակի 5 բարելավման եղանակների որոնումը նպատակահարմար է իրականացնել ինտեգրված միջառարկայական կապերի զարգացման ոլորտում: ¹

Ճանաչողական կարողությունները միմյանցից առանձին չեն դրսևորվում, սա մի բարդ համակարգ է, ուստի դրանց զարգացման արդյունավետ ուղիներից մեկը համագործակցային մոտեցումներն են՝ ի դեմս ինտեգրված դասի: Օրինակ՝ լեզուների ուսումնասիրության ժամանակ սովորողների մոտ ձևավորվում են բարդ ճանաչողական ունակություններ, որոնք հիմք են դառնում մտածողության, խոսքի և հաղորդակցման հմտությունների ձևավորման համար: Հաջորդիվ մյուս առարկաների ուսուցման ընթացքում այդ լեզվամտածողությունը հիմք է դառնում այլ կարողունակությունների զարգացման: Աշխարհագրությունն էլ սովորողին տալիս է հնարավորություն ճանաչել աշխարհը, մարդուն, այն միջավայրը, որտեղ ինքն ապրում է: Կարող ենք ասել, որ ցանկացած ուսումնական առարկա փոխլրացնում է մեկը մյուսին, դառնում շարունակողը, լրացնողը, ամբողջացնողը: Նորօրյա 6 աշխարհում մեծ նշանակություն ունի առարկաների և գիտությունների համագործակցությունը՝ միջառարկայական կապերը: Միջառարկայական կապերի

1. ¹ Կառուցողական կրթության հիմունքները և մեթոդները (ձեռնարկ ուսուցիչների համար), Ե.- 2004., էջ 42

ստեղծումը նպատակ ունի նաև նպաստել սովորողների մոտ այնպիսի բարձր մտավոր գործառույթների զարգացումը, ինչպիսիք են.

- իմաստալից ընկալումը,
- ստեղծագործ երևակայությունը,
- հասկացությունների մեջ մտածողությունը,
- կամայական հիշողությունը,
- խոսքային կարողությունը,
- վերլուծելու, համեմատելու, դասակարգելու կարողությունը:

Միջառարկայական կապեր ստեղծելու արդյունավետ եղանակ է ինտեգրված դասերի անցկացումը: Ինտեգրված դասը դասի հատուկ տեսակ է, որի շրջանակներում մեկ հասկացության ուսուցման ժամանակ տեղի է ունենում մի քանի առարկաների միաժամանակյա ուսուցումը: Այսպիսի դասի ընթացքում միշտ առանձնացվում է առաջատար առարկան, որը հանդես է գալիս որպես ինտեգրիչ, որը նպաստում է ուսուցանվող նյութի խորացմանը, ընդլայնմանն ու հստակեցմանը: Ինտեգրված դասերը կարող են միավորել ինչպես տարբեր առարկաներն իրենց ամբողջ ծավալով, այնպես էլ առանձին առարկաների բաղադրիչներ: Ինտեգրված դասի պլանավորումը ենթադրում է տարբեր առարկաների ուսուցիչների համագործակցություն: Ուսումնական հաստատության ուսուցիչը համագործակցում է գործընկերների հետ՝ փորձի փոխանակման և մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով:

Միջառարկայական կապերի հաստատման նպատակն է ուսուցման գործընթացը կազմակերպել այնպես, որ այն նպաստի բնության օրենքների մասին սովորողների գիտական պատկերացումներն ամբողջական համակարգի մեջ տեսնելու կարողությունների ձևավորմանը: Միջառարկայական կապերը հնարավորություն են տալիս ստեղծել միասնական, ինտեգրված դասեր, որոնց ժամանակ երեխաներն աշխատում են հեշտությամբ և հետաքրքրությամբ՝ արդյունքում յուրացնելով մեծ ծավալով օգտակար նյութեր, ձեռք բերելով գիտակցված գիտելիքներ և ձևավորելով համադրելու, ընդհանրացնելու կարողություններ: Կարևոր է նաև այն, որ ձեռք բերված գիտելիքներն ու հմտությունները կիրառվում են դպրոցականների կողմից իրենց գործունեության մեջ

ոչ միայն ստանդարտ ուսումնական իրավիճակներում, այլև անձանոթ իրավիճակում ստեղծագործական դրսևորումների, գործնական գիտելիքի, մտավոր ունակությունների դրսևորման ժամանակ: Դպրոցական պրակտիկայից հայտնի է, որ այն հարցերը, որոնք պահանջում են անսովոր կողմից որևէ բան դիտարկել, հաճախ երեխաներին փակուղու մեջ են դնում, և դա հասկանալի է, քանի որ նրանց դա չեն սովորեցրել: Իհարկե, ինչ-որ բան նորովի տեսնելը, և ոչ այնպես, ինչպես նախկինում տեսել ես, հեշտ խնդիր չէ: Բայց դա կարելի է սովորել այն դեպքում, երբ ուսուցման գործընթացը կազմակերպվում է սովորողների ինքնուրույն գործունեությունը, ստեղծագործական ունակությունները խթանելու, զարգացնելու բազմատեսակ հնարավորություններ ստեղծելու միջոցով:

Մետաճանաչողության վրա մեծապես ազդում է նաև ճիշտ ժամանակին արված հետադարձ կապը: Հետադարձ կապը, դա մի համալիր գործողությունների շղթա է, որի միջոցով հնարավոր է զգալիորեն օպտիմալացնել ուսուցումնական գործընթացները: Հետադարձ կապը թույլ է տալիս սովորողին շտկել սեփական սխալները, իսկ ուսուցիչն էլ հնարավորություն է ստանում համապատասխան տեղեկատվությունից պատկերացում կազմել ուսումնական գործընթացի այն ասպեկտների մասին, որոնց պետք է վերստին անդրադառնալ և ավելի շատ ուշադրություն դարձնել: Այս իմաստով հետադարձ կապը կարող է դրական ազդեցություն ունենալ ուսումնական գործընթացի վրա, քանի սովորողին հստակ մատնանշվում է խնդիրն ու դրա լուծման եղանակը:

Մետաճանաչողության զարգացմանը մեծապես կապված է ակտիվ ուսուցման հետ: Սովորողին դասը հետաքրքիր դարձնելու համար ուսուցիչը հաճախ է դիմում փոխգործուն ուսուցման մեթոդներին: Ուսուցման փոխներգործուն մոդելն անպայման ենթադրում է ուսուցման գործընթացում ստեղծագործական առաջադրանքների առկայություն, ինչպես նաև պարտադիր շփում աշակերտուսուցիչ համակարգում: Փոխներգործուն մոդելը նպատակ ունի ձևավորել ուսուցման այնպիսի պայմաններ, որոնցում բոլոր սովորողներն ակտիվորեն փոխգործակցում են: Այս մոդելը ենթադրում է նաև կենսական իրավիճակների մոդելավորում, տեղեկատվական հոսքերի ներթափանցում սովորողների գիտակցության մեջ, որոնց շնորհիվ իրականանում է սովորողների ակտիվ գործունեությունը:

Ուսուցման այս մեթոդը գրավիչ է նաև ուսուցիչների համար, օգնում է նրանց ավելի լիարժեք գնահատել ավագ դպրոցականի ունակություններն ու գիտելիքները,

հասկանալ նրան, դրդում է փնտրել ուսուցման նոր, ոչ ավանդական ձևեր և մեթոդներ: Սա մեծ տարածք է ուսուցիչների, մեթոդիստների, հոգեբանների և բոլոր նրանց ստեղծագործական ունակությունների դրսևորման համար, ովքեր ցանկանում են և կարողանում են աշխատել, ովքեր կարող են հասկանալ ժամանակակից երեխաներին, հաշվի առնել նրանց պահանջներն ու շահերը: Մարդու մտածողության մեջ շրջակա աշխարհի վերաբերյալ գիտելիքները ոչ թե պարզապես արտացոլվում են, ինչպես շրջապատող աշխարհը ջրի փոքրիկ կաթիլում, այլ դրանք մեծ մասամբ ձևավորում են մարդու վերաբերմունքը բնության, աշխարհի, կյանքի նկատմամբ, ազդում նրա բարոյական կերպարի վրա, հատկապես դեռահասային, ավագ դպրոցական տարիքում: Ուսուցման գործընթացում ոչ միայն բնության մասին գիտելիքներն են կարևոր, այլև նրա գաղտնիքների մեջ խորը ներթափանցումը, որը հանգեցնում է գիտության հմայքի բացահայտմանը, ծագում է ակնածանք դրա հանդեպ: Ահա թե ինչն ունի դաստիարակչական ուժ, ինչը կարող է օգնել սովորողին սիրել գաղափարները և ճշմարտությունը, հոգևոր արժանիքները բարձր դասել պատահական առավելություններից:

Այստեղից կարելի է եզրահանգել, որ ուսուցչի գլխավոր խնդիրը դառնում է դասագործընթացում այնպիսի գործունեության ապահովումը, որը կարող է իրականանալ միայն ժամանակակից փոխներգործուն տեխնոլոգիաների և մեթոդների կիրառմամբ: Վերջիններիս օժանդակությամբ աշակերտն ինքն է բացում դեպի իմացություն տանող ուղին, և ձեռք բերված գիտելիքը դառնում է նրա իսկ գործունեության արդյունքը: Այսպես սովորողն էլ ավելի շատ հնարավորություն է ունենու ցուցաբերել ինքնուրույնություն, ինչը շատ կարևոր է մետաճանաչողության զարգացման համար:

Վերցնենք օրինակ «Մետաիմացության թերթիկ» հևարը; Այս թերթիկը

լրացնելիս կատարեք հետևյալ չորս քայլերը՝

- Ընթերցեք հարցերը:
- Դրեք աստղանիշ բոլոր այն հարցերի դիմաց, որոնց պատասխանները գիտեք:
- Դրեք «օ» նշանը բոլոր այն հարցերի վրա, որոնց պատասխանները չգիտեք:
- Գրեք իմացած բոլոր հարցերի պատասխանները պատասխան սյունակում:
- Մեկ անգամ ևս ընթերցեք այն հարցերի պատասխանները, որոնց վրա դրել եք
- «օ» նշանը:

Ուսուցչի համար կարևոր է սովորեցնել և նպաստել, որ սովորողը սովորածը մտապահի: Յուրաքանչյուր սովորող ունի իր ինքնաճանաչումը, և մենք չենք կարող ստիպել նրանց սովորել, բայց կարող ենք ստիպել մտածել: Որպեսզի սովորողներն ունենան մնայուն գիտելիքներ, պետք է ուսուցանվող նյութը կրկնելու, ամրապնդելու, կիրառելու, կապակցելու հնարավորություններ ընձեռվեն: Ընդ որում, դա պետք է արվի կանոնավոր և շարունակական ձևով: Այլ կերպ ասած՝ պետք է կարևորել ոչ միայն ուսումնական ծրագրի ընդգրկումը, այլև խորությունը: Ուսուցիչը, նկատելով աշակերտների դրսևորած ընդունակությունները, պետք է ուղղորդի հասնելու լիարժեքության, ինքնադրսևորման և ինքնաբավարարման: Այս ձևով զարգանում են նաև մտածողությունը, երևակայությունը:

Ասենք նաև, որ դասը պետք է պլանավորել այնպես, որ տվյալ թեման ունենա դաստիարակչական, բարոյական, մարդասիրական, անհատի ձևավորման, բնության նկատմամբ բարեխիղճ վերաբերմունքի, հայրենասիրության զգացումի , մասնագիտության գիտակցված ընտրության կողմնորոշում:

Բազմակողմանի միջառարկայական կապերի միջոցով ոչ միայն որակապես նոր մակարդակում լուծվում են սովորողների ուսուցման, զարգացման և դաստիարակության խնդիրները, այլև հիմք է դրվում իրական բարդ խնդիրների լուծման համապարփակ տեսլականի և մոտեցման համար: Դա է պատճառը, որ միջառարկայական կապերը ուսուցման և դաստիարակության համապարփակ մոտեցման համար կարևոր պայման և արդյունք է:

Ապագայի հետ կապված շարժառիթները սկսում են ավագ դպրոցականին դրդել ուսումնական գործունեության: Ուսումնական առարկաների նկատմամբ դրսևորվում է մեծ ընտրողականություն: Ճանաչողական գործունեության հիմնական շարժառիթը մասնագիտությունն ձեռք բերելու ձգտումն է: Նոր սոցիալական դիրքորոշումն ավագ դպրոցականների համար կտրուկ փոխում է ուսուցման նշանակությունը: Նրանք ուսումնական գործընթացը սկսում են գնահատել այն առումով, թե ինչ է տալիս այն իրենց ապագայի համար: Ավագ դպրոցականի ուսումնական գործունեությունն ավելի բարձր պահանջներ է ներկայացնում նրա մտավոր ակտիվության և ինքնուրույնության նկատմամբ: Ծրագրային նյութի յուրացման համար անհրաժեշտ է ընդհանրացնող հասկացությունների, եզրույթների, գաղափարների վերլուծության միջոցով մտածողության զարգացման բարձր մակարդակ: Ուսումնառության դժվարությունները կապված են ոչ թե սովորելու ցանկության, այլ նոր պայմաններում սովորելու անկարողության հետ:

Սովորողները մեծանում են, հարստանում իրենց փորձով. նրանք գիտակցում են, որ կանգնած են ինքնուրույն կյանքի շեմին: Աճում է նրանց գիտակցված վերաբերմունքն ուսման նկատմամբ: Ուսուցումը դառնում է կյանքի անմիջական իմաստ: Ուսումնական առարկաների նկատմամբ վերաբերմունքն ընտրողական բնույթ է կրում:

2. Միջառարկայական կապերի ստեղծման դերը սովորողների ուսումնառության գործընթացում

Ուսումնասիրենք և քննարկենք սովորողների մետաճանաչողության վրա միջառարկայական կապի անհրաժեշտությունը: Զիմիա առարկայի հետ միջառարկայական կապ ստեղծվում է հատկապես մթնոլորտ թեման ուսուցանելիս. մթնոլորտի կազմում թթվածնի, ազոտի և այլ գազերի մասին ծանոթությանը, բնական ռեսուրսներ թեմայում՝ մետաղները և ոչ մետաղները ուսուցման ժամանակ: Սերտ է կապը պատմությունն առարկայի հետ. «Հայկական լեռնաշխարհ» թեմայում պատմական ակնարկները կարևոր գիտելիք են, իսկ աշխարհաքաղաքական վերլուծություններում՝ անհրաժեշտ: Հնարավոր չէ պատկերացնել «Բնական զոնաներ» թեմայի յուրաքանչյուր առանց կենսաբանությունն առարկայի հետ ինտեգրման՝ կենդանիների և բույսերի մասին տեղեկությի: Իսկ գրականության հետ կապը ստեղծագործելու կարողությունն է զարգացնում սովորողների մոտ:

Մաթեմատիկա և աշխարհագրությունն գիտությունների կապը սերտ է և անքակտելի: Աշխարհագրության ուսուցումն անհնար է առանց ճշգրիտ հիմքի, տրամաբանական եզրահանգումների և համադրումների: Աշակերտների մոտ պատկերացումները Երկրի ձևի, չափերի, քարտեզներում՝ մասշտաբի, երկու բնակավայրերի միջև հեռավորության որոշման, բնակչության աճի, տեղաբաշխման և աշխարհագրական խնդիրներում մաթեմատիկական գիտելիքների կիրառումը բացառիկ է: Հարկ է նշել մասշտաբը և արտահայտում են աշխարհագրական կողորդինատներ թեմաները, որոնք ակնառու կերպով մաթեմատիկայի որոշիչ դերը: Մաթեմատիկայի հետ կապը հնարավորություն է տալիս հարստացնելու աշխարհագրության գիտական հետազոտությունների մեթոդական, որն էլ կոչվում է

աշխարհագրության մաթեմատիկացում: Այս մեթոդը հնարավորություն է ընձեռում առավել հստակ ձևակերպել շատ հիմնախնդիրներ:²

Սովորողը պետք է լինի ճկուն, կարողանա ընտրել, համեմատել, պարզաբանել, հիմնավորել, փաստարկել, հետազոտել ու կշռադատել: Այս ամենն իմանալն ու կարողանալը կնշանակի՝ ունենալ գիտակցական բարձր մակարդակ, ճանաչողական կարողություններ, ինչն էլ այսօր կարևոր է արդի աշխարհում: Ճանաչողական կարողությունները միմյանցից առանձին չեն դրսևորվում, սա մի բարդ համակարգ է, ուստի դրանց զարգացման արդյունավետ ուղիներից մեկը համագործակցային մոտեցումներն են՝ ի դեմս ինտեգրված դասի: Օրինակ՝ լեզուների ուսումնասիրության ժամանակ սովորողների մոտ ձևավորվում են բարդ ճանաչողական ունակություններ, որոնք հիմք են դառնում մտածողության, խոսքի և հաղորդակցման հմտությունների ձևավորման համար: Հաջորդիվ մյուս առարկաների ուսուցման ընթացքում այդ լեզվամտածողությունը հիմք է դառնում այլ կարողունակությունների զարգացման: Աշխարհագրությունն էլ սովորողին տալիս է հնարավորություն ճանաչել աշխարհը, մարդուն, այն միջավայրը, որտեղ ինքն ապրում է: Կարող ենք ասել, որ ցանկացած ուսումնական առարկա փոխլրացնում է մեկը մյուսին, դառնում շարունակողը, լրացնողը, ամբողջացնողը:

Ասենք նաև, որ դասը պետք է պլանավորել այնպես, որ տվյալ թեման ունենա դաստիարակչական, բարոյական, մարդասիրական, անհատի ձևավորման, բնության նկատմամբ բարեխիղճ վերաբերմունքի, հայրենասիրության զգացումի , մասնագիտության գիտակցված ընտրության կողմնորոշում:

Աշխարհի մասին պատկերացումները, բարոյական հայացքները և համոզմունքները, մտածելակերպը և աշխարհայացքը, հետաքրքրությունները, ձգտումները և արժեքները պայմանավորվում են խմբային գիտակցության առանձնահատկություններով, որում անձը ձևավորվում է և որում ընթանում է նրա առօրյա գործունեությունը: Ուստի ուսուցչի շատ կարևոր հանգամանք է , որ դասավանդմանը զուգահեռ ուսուցիչը կարողանա սովորողի մոտ զարգացնել նաև արժեքային համակարգ: Ուսուցման դաստիարակչական ներգործությունն անխուսափելի է, որովհետև սովորողների համար ուսուցումը գործունեության

2. ² Խաչատրյան Ա.Շ. «Աշխարհագրություն խնդրագիրք» , Երևան, «Արևիկ» 2012

հիմնական տեսակն է, դրա համար էլ այն կարևոր դեր է կատարում նրանց անձի ձևավորման գործում:

Ժամանակակից պայմաններում անհրաժեշտություն է առաջանում սովորողների մոտ ձևավորել ոչ թե մասնավոր, այլ ընդհանրացված ունակություններ, որոնք լայն ոլորտներում ունեն գիտելիքը տեղափոխելու հատկություն: Նման 7 ունակությունները, որոնք ձևավորվել են որևէ առարկայի ուսումնասիրության ընթացքում, այնուհետև սովորողների կողմից ազատորեն օգտագործվում են այլ առարկաների ուսումնասիրության և գիտելիքի գործնական կիրառության մեջ: Մանկավարժական գրականության մեջ առկա են «միջառարկայական կապեր» հասկացության ավելի քան երեսուն սահմանումներ, ինչպես նաև երևույթի մանկավարժական արժեքի գնահատականի և տարբեր դասակարգումների վերաբերյալ տարբեր մոտեցումներ: Առավել ամբողջական սահմանումներից մեկն այն է, որ միջառարկայական կապերը օբյեկտների, երևույթների և իրական գործընթացների միջև սինթեզը, ինտեգրատիվ հարաբերությունները ցույց տալու համար կրթական կատեգորիաներ են, որոնք արտացոլվում են ուսումնադաստիարակչական գործընթացի բովանդակության, ձևերի և մեթոդների մեջ ու իրենց որոշակի հստակ միասնության մեջ կատարում են կրթական, զարգացնող և դաստիարակչական գործառույթներ:

Ինտեգրման գործընթացում տեղի է ունենում գիտությունների միջև կապերի մերձեցում: Ներկայումս առանձին, միմյանցից անկախ դասավանդվող ուսումնական առարկաների ինտեգրումը թույլ կտա ուսուցման շեշտադրումները գիտելիքների պարզ կուտակումից տեղափոխել իրական կյանքում հանդիպող իրավիճակներում և մասնավորապես այլ ուսումնական առարկաների ոլորտում, իրենց գիտելիքներն, ընդհանուր առմամբ, կիրառելու ունակությունների զարգացման վրա: Ավանդաբար ինտեգրումն իրականացնելու առավել մատչելի միջոցներից մեկը ինտեգրված դասերի անցկացումն է:

Տարբեր առարկաներից վերցրած բաղադրիչները, որոնք միավորվում են մեկ դասի մեջ, կազմում են մեկ համակարգ, որի շուրջ հավաքվում և մի նոր համակարգ է դառնում ուսումնական նյութը: Որպեսզի ինտեգրվեն, այսինքն՝ ճիշտ ձևով միավորվեն ուսումնական գործընթացի բաղադրիչները, պետք է կատարվեն այնպիսի գործողություններ, որոնք ի սկզբանե ունեն ստեղծագործական բնույթ: Այս նախապատրաստական գործունեության ընթացքում առանցքային նշանակություն ունեն ուսուցիչների համագործակցելու, իրարից սովորելու, ընդհանուր նպատակներ ու

ինդիհրնել գտնելու կարողությունները: Այսպիսով, ելնելով ինտեգրված դասի տեսակից և ինտեգրվող առարկաների դասերի տիպերից, ուսուցիչները համատեղ կազմում են իրենց դասի նպատակները՝ զուգակցելով ընդհանուրը մասնավորի հետ, շաղկապելով ինտեգրվող կյուբի բովանդակությունները տարբեր առարկաների տեսանկյուններից:

Միջառարկայական կապերի լայն կիրառման համար գոյություն ունեն մի շարք օբյեկտիվ պատճառներ: Դրանցից են վերջին տասնամյակների ընթացքում ինտեգրատիվ ուսուցման պայմաններում ուսուցումը ավելի արդյունավետ վերջնարդյունք է ապահովում: Հատկանշական է բնագիտամաթեմատիկական առարկաների դերը աշխարհագրության դասավանդման գործընթացում:

Քանի որ մետաճանաչողությունը օգնում է սովորողներին ընտրել ճիշտ ճանաչողական գործիք և ուսումնառությունը դարձնել առավել արդյունավետ, ապա միջառարկայական կապերը միայն նպաստում և օժանդակում են:³ Իսկ ուսումնասիրությունները ցույց են տվել, որ մետաճանաչողական հմտությունները էապես բարելավելում են սովորողների ուսումնառության արդյունքները:

3. Միջառարկայական կապերի ստեղծման հնարավորությունը աշխարհագրության դասի շրջանակներում

Աշխարհագրություն առարկայի դասավանդման իմ փորձից ելնելով ութերորդ դասարանում ուսումնասիրելով «Տարածաշրջաններ» ենթաթեման նպատակ ունենալով ձևավորել գիտելիքներ յուրաքանչյուր տարածաշրջանի բնական պայմանների ու ռեսուրսների, բնակչության, տնտեսության կառուցվածքի ու դրանց տեղաբաշխման աշխարհագրական օրինաչափությունների և տարածաշրջանին բնորոշ հիմնախնդիրները: Խթանել հետազոտական և մտածական հմտությունների զարգացումը: Ակնկալում եմ վերջնարդյունքում աշակերտը կկարողանա նկարագրել և վերլուծել յուրաքանչյուր տարածաշրջանի աշխարհագրական դիրքի, բնական պայմանների և ռեսուրսների առանձնահատկությունները, բնակչության որակական և քանակական բնութագրիչները, տնտեսության ճյուղային ու տարածքային կառուցվածքը: Այս թեման ուսումնասիրելիս ստեղծում եմ միջառարկայական կապ հայոց լեզու առարկայի հետ՝ վերլուծել և ընկալել գրական հայերենի տարբեր

3. ³ Մկրտչյան Գ.Պ.Փանոսյան Ա.Լ.
«Աշխարհագրություն», Տեղեկատուաղյուսակներ, տերմիններ, Երևան,
«Անտարես», 2009

տեքստեր, հասկանալի դրանց հիմնական գաղափարները, ունենա գրագետ բանավոր և գրավոր խոսք/:

Համաշխարհային պատմության առարկայից գիտելիքներ ունենալ քաղաքական համակարգերի վերավերյալ, իմանալ Աշխարհագրական մեծ 14 հայտնագործությունների մասին: կենսաբանություն առարկայից գաղափար ունենալ տարբեր աշխարհամասերում տարածված կենսաբազմազանության վերաբերյալ: Հանրահաշվիկ առարկայից կարողանալ կատարել թվաբանական գործողություններ. հաշվել տոկոս, լուծել ինդիքներ:

Թվային գրագիտության և համակարգչային գիտությանից ստացած գիտելիքները օգտագործել, կազմել գրաֆիկներ և կատարել հաշվարկներ: Միջառարկայական կապերի միջոցով անցկացվող դասեր ունեցել են նաև իններորդ դասարանում:

Օրինակ իններորդ դասարանում ունումնասիրելով ՀՀ 'Խոշոր քաղաքներ' թեման, միջառարկայական կապեր են ստեղծվել գրականություն առարկայի հետ՝ վերհիշել ենք պատմություններ Գյումրի, Վաղարշապատ, Վանաձոր, Կապան և Հրազդան քաղաքների մասին, արտասանել բանաստեղծություններ նվիրված այս քաղաքներին:

Հայոց պատմություն առարկայից հայրենասիրական անդրադարձ է եղել քաղաքների հիմնադրմանը, միայն պայքարների և հիմնադիրների արիությանը:

Արվեստ և մշակույթ առարկաների հետ ստեղծվել են կապեր քաղաքների հուշակոթողների ստեղծման, գրավչության, բացառիկ դերի վերաբերյալ:

Հայոց լեզու առարկայից պարզաբանվել են քաղաքների անվանումների ծագումնաբանությանը, պատմվել են ժողովրդական լեգենդներ քաղաքների անվանումների մասին: Կատարվել են հետաքրքիր մտահաղացումներ, թե ինչպես օգտագործել այս քաղաքների պատմամշակութային կոթողները, բնության բարիքները ավելի շատ եկամուտներ ստանալու, նորարական մտքեր իրագործելու համար:

Միշտ էլ հետաքրքիր է լսել ժամանակակից սերնդի մտքերը մեր հայրենիքը ծաղկեցնելու վերաբերյալ: Բնապահպանություն առարկայի հետ կապելով դասը,

իհարկե չէինք կարող չանդրադառնալ այս խոշոր քաղաքների մաքրության պահպանման, հիմնախնդիրների և քաղաք-բնակիչ գրագետ կապի պահպանմանը:⁴

Ֆիզիկա առարկայից աշակերտները վերհիշել են ջրի հիմնական հատկությունները՝ակուստիկ հատկությունը և մի շարք այլ զարմանահրաշ 15 հատկություններ, որոնք մեծ հնարավորություն տվեցին էլ ավելի խորապես ուսումնասիրել և վերլուծել ջրոլորտ թեման:


Քիմիա առարկայի հետ կապելով թեման վերհիշել ենք ջրի բաղադրությունը, կազմությունը, ինչ տարրերից է կազմված, նրա լուծիչ հատկությունը և օգտագործման պիտանելիությունը:Ելնելով այս հանգամանքից ուսումնասիրեցինք մի շարք շրջակա բնակավայրերի ջրային աղբյուրների պաշարները:

Մեր հետազոտությունների արդյունքից ելնելով, եկանք այն եզրակացությանը, որ որոշ բնակավայրերի ջրային պաշարները իրենց որակական հատկանիշներով և քիմիական բաղադրությամբ չեն համապատասխանում որակական ցուցանիշին : Կենսաբանություն առարկայի հետ կապելով վերհիշել ենք 'ջուրը կյանք է' խորագիրը, որ առանց ջրի կյանք գոյություն ունենալ չի կարող, կյանքը սկիզբ է առել հենց ջրից: Բնապահպանության տեսանկյունից նայելով միանշանակ խոսվել է մաքրության պահպանման, կենսազանգվածի բարեխիղճ օգտագործման և մարդու գործունեության ազդեցության մասին:

Մաթեմատիկա առարկայից աշակերտների ստացած գիտելիքներով հաշվարկներ ենք արել, թե որքան է համաշխարհային ջրի պաշարները, ինչպես նաև մեր հայրենիքի ջրի պաշարների քանակը: Օգտվելով ռեսուրսապահովվածության բանաձևից հաշվել ենք, թե քանի տարի կբավականացնի ջրային ռեսուրսները: Այս հաշվարկների արդյունքները հնարավորություն կտան ավելի խնայողաբար օգտագործել այն: Աշակերտներին տրվեց առաջադրանք, թե ինչպես կարելի է խնայել ջուրը և ինչպես կարելի է քաղցրահամ ջրի պակասը լրացնել :

Քարտեզագրամների միջոցով շատ կիրառելի է սեռատարքային բուրգը,որն ընդգրկում է սեռային և տարիքային խմբերի թվային տվյալները:

4. ⁴ Գրիգորյան Ա.Պողոսյան Վ., «Բնագիտություն»,Երևան, «Արևիկ»,2007



Աշխարհագրական տեսական մտածողությունը թույլ է տալիս վերլուծել, համադրել, կատարել ընդհանրացումներ և մաթեմատկայի շնորհիվ բարձրանում է գիտական եզրակացությունների ճշտագրտությունը, հուսալիությունը, հիմնավորվածությունը և ապացուցելիությունը:⁵

:

5. ⁵ Գրիգորյան Ա. Պողոսյան Վ., «Բնագիտություն», Երևան, « Արևիկ», 2007

Դասի պլան 1

Առարկան - աշխարհագրություն		
Դասարանը – 7-րդ	Ուստարի – 2023-2024	Կիսամյակը – 1-ին
Թեման	<<Երկրի մակերևույթի ձևավորումը : Համաշխարհային օվկիանոսի աշխարհագրական առանձնահատկությունները>> թեմայի ամփոփում:	
Դասի նպատակը	<p>Սովորողների մեջ ձևավորել գիտելիքներ</p> <ul style="list-style-type: none"> • աշխարհագրական թաղանթի , կառուցվածքի , հատկանիշների • երկրակեղևի կառուցվածքի , սալերի և դրանց շարժման • երկրագնդի խոշոր պլատֆորմների և գեոսինկլինալային շրջանների • մայրցամաքների և օվկիանոսների • համաշխարհային օվկիանոսի հատակի ռելիեֆի • համաշխարհային օվկիանոսի ջրի ջերմության ու աղիության • մակընթացության և տեղատվության վերաբերյալ 	
Վերջնարդյունքները	<p>Արդյունքում սովորողը պետք է կարողանա.</p> <p>Ներկայացնի</p> <ol style="list-style-type: none"> 1. Աշխարհագրական թաղանթի , կառուցվածքի , հատկանիշները 2. Բնորոշի երկրաբանական տարբեր դարաշրջաններում երկրագնդի զարգացման գլխավոր գործընթացները 3. Բացատրի պլատֆորմների առաջացումը և գեոսինկլինալների զարգացման փուլերը 4. Թվարկի երկրաբանական վաղ անցյալի գերմայրցամաքները , առանձնացնել ժամանակակից մայրցամաքներն ու օվկիանոսները 5. Կարողանա մայրցամաքների ուրվագծերի համադրմամբ վերլուծի երկրաբանական անցյալում գոյություն ունեցած միասնական մայրցամաքի պատկերը 6. Ներկայացնի Համաշխարհային օվկիանոսի հատակի ռելիեֆը 7. Բացատրի Համաշխարհային օվկիանոսի ջրի ջերմության և աղիության փոփոխության օրինաչափությունները 8. Բացատրի մակընթացության և տեղատվության երևույթը 9. Ներկայացնի տարբեր օվկիանոսներում տաք և սառը հոսանքները 	
Ընդհանրական խաչվող հասկացությունները	<p><i>Կայունություն և փոփոխություն</i></p> <p>Պլատֆորմները որպես երկրակեղևի կայուն , իսկ գեոսինկլինալները՝ անկայուն , փոփոխական տեղամասեր:</p> <p><i>Պատճառ և հետևանք</i></p> <p>Մեկընթացությունն ու տեղատվությունը՝ որպես տիեզերական մարմինների ձգողության հետևանք: Ցունամիս՝ որպես օվկիանոսի հատակին առաջացած երկրաշարժերի և հրաբուխների հետևանք: Օվկիանոսային հոսանքները մշտական փչող քամիների, օվկիանոսի մակարդակների, խտության և այլ գործոնների հետևանք:</p>	
Միջառարկայական կապերը	<p>Հայրց լեզու - Վերլուծել և ընկալել տարբեր բնույթի գրական հայերեն տեքստեր և հասկանալ դրանց հիմնական գաղափարը: Գազմել ընտրված նպատակին, խնդիրներին և լսարանին համապատասխան գրագետ բանավոր և գրավոր խոսք, այդ թվում՝ հրապարակային խոսք, կիրառել ոչ վերբալ հաղորդակցման տարատեսակ միջոցներ:</p> <p>Բնություն - Կարողանալ բացատրել երկրակեղևի շարժումները, երկրի մակերևույթը փոփոխող ներծին և արտածին ուժերը:</p> <p>Իմանալ ջրային թաղանթի կառուցվածքային տարրերի մասին</p>	
Անհրաժեշտ նյութեր, տեխնիկական միջոցներ	Դասագիրք, համակարգիչներ , պրոյեկտոր , քարտեր ,	

Ուսուցման մեթոդներ:	Զրույց, մտազրոհ, ցուցադրում, դիտում:
---------------------	--------------------------------------

ԴԱՄԻ ԸՆԹԱՑՔԸ

Դասի փուլերը	Փուլի խնդիրները	Ուսուցչի Գործողությունները	Աշակերտի գործողությունները
1. Կազմակերպչական մաս (2 րոպե)	Նախապատրաստվել դասին	Աշակերտների և ուսուցչի փոխադարձ ողջույն, բացականչելի ամրագրում:	Պատասխանում են ուսուցչի հարցերին:
2 . Դասի թեմայի և նպատակի ձևակերպում (3 րոպե)	Քննարկման արդյունքներից բխեցնել դասի նպատակը:	<p>Այսօրվա դասի թեման է <<Երկրի մակերևույթի ձևավորումը : Համաշխարհային օվկիանոսի աշխարհագրական առանձնահատկությունները>> թեմայի ամփոփում:</p> <p>Դասի նպատակն է սովորողների մեջ ձևավորել գիտելիքներ</p> <ul style="list-style-type: none"> • աշխարհագրական թաղանթի , կառուցվածքի , հատկանիշների • երկրակեղևի կառուցվածքի , սալերի և դրանց շարժման • երկրագնդի խոշոր պլատֆորմների և գեոսինկլինալային շրջանների • մայրցամաքների և օվկիանոսների • համաշխարհային օվկիանոսի հատակի ռելիեֆի • համաշխարհային օվկիանոսի ջրի ջերմության ու աղիության • մակընթացության և տեղատվության վերաբերյալ վերաբերյալ: 	Աշակերտները տեսրում գրում են դասի թեման և նպատակը:

<p>3. Ուսումնական նյութի կրկնություն</p> <p>(14-15 րոպե)</p>		<p>Դասի ընթացք. Դասը սկսում ենք հարցադրումներով. 1. Ձեր կարծիքով՝ ինչպե՞ս են առաջացել մայրցամաքներն ու օվկիանոսները: 2. Ինչո՞ւ երկրագնի որոշ մասերում չեն լինում երկրաշարժեր և հրաբուխներ: 3. Ձեր կարծիքով ինչպե՞ս է ծովն ալեկոծվում: 4. Ինչո՞ւ են օվկիանոսներում առաջանում ծովային հոսանքներ</p>	<p>Սովորողները ուսուցչի կողմից դասի սկզբին բաժանվում են 4 խմբերի, և ուսուցիչը հանձնարարում է յուրաքանչյուր խմբին, իր կողմից տալիս հարցադրումներ: Աշակերտները պատրաստվում են և հերթով ներկայացնում :</p>
<p>4. Գիտելիքների ամրապնդում</p> <p>(18 րոպե)</p>	<p>Ձևավորել ձեռք բերած գիտելիքները ներկայացնելու, մեկնաբանելու կիրառելու կարողություններ:</p>	<p>Այս փուլում ուսուցիչը Gif –երի միջոցով ցուցադրում է սալերի տեղաշարժը , մակընթացությունը և տեղատվությունը : Այնուհետև դիտում են տեսադասեր https://www.youtube.com/watch?v=1w4cEp4pcjk https://www.youtube.com/watch?v=yYXYyYBPkrM https://www.youtube.com/watch?v=1ifoC1FKYXQ https://www.youtube.com/watch?v=qedWRfQorwQ</p> <p>Վերջին 2 րոպեի ընթացքում մայրցամաքների ուրվագծերի համադրմամբ վերլուծել երկրաբանական անցյալում գոյություն ունեցած միասնական մայրցամաքի պատկերը:</p>	<p>Սովորողները կատարում են տրված առաջադրանքները:</p>
<p>5. Անդրադարձ</p> <p>(4 րոպե)</p>	<p>Ամփոփել դասը՝ վերլուծելով և գնահատելով կատարված աշխատանքը:</p>	<p>Սովորողներին տրվում են հետևյալ հարցերը. - Ո՞րն էր այսօրվա դասի թեման: - Ի՞նչից տպավորվեցիք: - Ի՞նչը առավել հաճույքով կատարեցիք</p>	<p>Պատասխանում են տրվող հարցերին, ներկայացնում առաջարկություններ:</p>
<p>6. Տնային հանձնարարություն</p> <p>(3 րոպե)</p>	<p>Ներկայացնել տնային առաջադրանքը:</p>	<p>Հանձնարարում է տանը ուրվագծային քարտեզի վրա գունային սխեմայով պատկերել տաք և սառը օվկիանոսային հոսանքները :</p>	<p>Գրի են առնում հիմնական հասկացությունները:</p>

Դասի պլան 2

§ 19. Մթնոլորտի խոնավությունը (բացարձակ և հարաբերական խոնավություն): Մթնոլորտային տեղումների բաշխումը երկրագնդի վրա

Առարկան - Աշխարհագրություն		
Դասարանը – 7-րդ	Ուստարի – 2023-2024	Կիսամյակը – 1-ին
Թեման	Մթնոլորտի խոնավությունը (բացարձակ և հարաբերական խոնավություն): Մթնոլորտային տեղումների բաշխումը երկրագնդի վրա	
Դասի նպատակը	<p>Զարգացնել գիտելիքներ մթնոլորտի բացարձակ խոնավություն և մթնոլորտի հարաբերական խոնավություն հասկացությունների վերաբերյալ, տրված տվյալներով <i>լուծել</i> խնդիրներ՝ օդի հարաբերական և բացարձակ խոնավություն:</p> <p><i>Բացատրել</i> երկրագնդի վրա մթնոլորտային տեղումների անհավասարաչափ տեղաբաշխման պատճառները</p> <p>Զարգացնել սովորողների վերլուծական կարողությունները:</p>	
Վերջնարդյունքները	<p>Արդյունքում սովորողը պետք է կարողանա.</p> <ol style="list-style-type: none"> <i>Մահմանել</i> մթնոլորտի բացարձակ խոնավություն և մթնոլորտի հարաբերական խոնավություն հասկացությունները, տրված տվյալներով <i>լուծել</i> խնդիրներ օդի հարաբերական և բացարձակ խոնավության վերաբերյալ: <i>Բացատրել</i> երկրագնդի վրա մթնոլորտային տեղումների անհավասարաչափ տեղաբաշխման պատճառները 	
Ընդհանրական խաչվող հասկացությունները	<p><i>Օրինաչափություններ</i></p> <p>Օդի հարաբերական և բացարձակ խոնավություն</p> <p>Հագեցած և չհագեցած օդ:պ</p>	
Միջառարկայական կապերը	<p>Հայոց լեզու - Վերլուծել և ընկալել տարբեր բնույթի գրական հայերեն տեքստեր և հասկանալ դրանց հիմնական գաղափարը: Ձևակերպել ընտրված նպատակին, խնդիրներին և լսարանին համապատասխան գրագետ բանավոր և գրավոր խոսք, այդ թվում՝ հրապարակային խոսք, կիրառել ոչ վերբալ հաղորդակցման տարատեսակ միջոցներ:</p> <p>Բնություն - Կարողանալ բացատրել մթնոլորտի տաքացումն ու ջերմաստիճանը, մթնոլորտային ճնշումը, օդի խոնավությունը, մթնոլորտային տեղումների առաջացումը, եղանակ և կլիմա հասկացությունները:</p> <p>Մաթեմատիկա - Կարողանալ կատարել թվաբանական գործողություններ տոկոսի, ջերմաստիճանի ցուցանիշների հետ:</p>	
Անհրաժեշտ նյութեր, տեխնիկական միջոցներ	Ուսումնառության նոր նյութ, պրոյեկտոր, գրատախտակ, մարկեր, Ա3 թղթեր:	
Ուսուցման մեթոդներ	Մտագրոհ, տեսանյութի դիտում, աշխատանք տեքստով:	

ԴԱՄԻ ԸՆԹԱՑՔԸ

Դասի փուլերը	Փուլի խնդիրները	Ուսուցչի գործողությունները	Աշակերտի գործողությունները
1. Կազմակերպչական մաս (1-2 րոպե)	Կազմակերպել դասի սկիզբը:	Ողջունում է աշակերտներին, նշում բացականչություններին:	Ողջունում են ուսուցչին, պատասխանում են ուսուցչի հարցերին:
2. Տնային աշխատանքի ստուգում (3-4 րոպե)	Պարզել սովորողների կողմից անցած նյութի յուրացման աստիճանը, առկա խնդիրները:	Հարցերի միջոցով պարզում է գիտելիքները մթնոլորտային ճնշման, չափման, փոփոխությունների, քամիների ուժի, ուղղության և արագության մասին: Տեղական քամիների (բրիզ, լեռնահովտային քամիներ) քամիների վարդի մասին ձեռք բերած գիտելիքներն ու կարողությունները, տալիս է համապատասխան բացատրություններ, ցուցումներ, պատասխանում է հարցերին:	Ներկայացնում են կատարած աշխատանքը, ցուցադրում գիտելիքները, տալիս են հարցեր:
3. Նախորդ դասին ուսումնասիրած նյութի ամփոփում (5-6 րոպե)	Ամփոփել նախորդ աշխատանքի արդյունքները, նախապատրաստել աշակերտներին նոր նյութի ընկալմանը, արդիականացնել գիտելիքներն ու կարողությունները:	Իրականացնում է ձևավորող փոխադարձ գնահատում՝ վիճակահանությամբ առանձնացված հարցերի օգնությամբ: Ամփոփում է աշխատանքը, տալիս համապատասխան պարզաբանումներ: Կապեր ստեղծել նախորդ և օրվա դասերի հիմնական գաղափարների միջև:	Պատասխանում են վիճակահանությամբ առանձնացված հարցերին: Իրականացնում են փոխադարձ գնահատում, լսում ուսուցչի պարզաբանումները: Դատողություններ են անում ուսուցչի հարցադրումների հիման վրա՝ բացահատելով նոր դասի գաղափարները:
4. Հետաքրքրության խթանում (2 րոպե)	Կազմակերպել մտազրոհ, իրականացնել մտքերի քարտեզագրում, տարափ:	Գրատախտակին գրում է հետևյալ հասկացությունները. բացարձակ խոնավությունը, հարաբերական խոնավություն, հազեցած օդ, չհազեցած օդ. և քարտեզագրում է սովորողների ներկայացրած գաղափարները (բացատրական, փոխադարձ կապեր, ենթադրություններ և այլն): Շեշտադրում է այն հարցերը, որոնք պետք է ուսումնասիրվեն դասի ընթացքում:	Սովորողները հնչեցնում են թեմատիկ մտքեր, հետաքրքրող հարցերը, դուրս բերում նոր դասի թեման:
5. Դասի թեմայի և նպատակի ձևակերպում (2-3 րոպե)	Քննարկման արդյունքներից բխեցնել դասի նպատակն ու խնդիրները:	Դասի թեման գրում է գրատախտակին, նշում դասի նպատակը և խնդիրները:	Ուշադիր լսում են ուսուցչին, տեսրում գրում են դասի թեման և նպատակը:
6. Ուսումնական նյութի նախնական յուրացում		Դասանյութը բաժանում է մասերի, հանձնարարում խմբերին ուսումնասիրել այն և ԱՅ թղթերին	Խմբերը կարդում են դասի առանձին մասերը, քննարկում այն և

(14-16 բույսեր)		պատկերավոր նկարագրել:	գաղափարները պատկերում Ա3 թղթերի վրա՝ հստակ ձևակերպելով հիմնական գաղափարները:
7. Գիտելիքների ամրապնդում (8-10 բույսեր)	Ամրապնդել ձեռք բերած գիտելիքները ելույթների և մեկնաբանությունների միջոցով:	Ուղղորդում է աշխատանքների նպատակային ներկայացումն ու ամրապնդումը: Կատարվում է կարճատև գործնական աշխատանք խմբերով՝ 1-ին խումբ - 30 ° ջերմաստիճանում օդը հագեցնելու համար անհրաժեշտ է 30 գ/մ ³ ջրային գոլորշի, սակայն օդում առկա է 5 գ/մ ³ : Հաշվել օդի հարաբերական խոնավությունը: 2-րդ խումբ - Մեկ խորանարդ մետր օդում առկա է 2 գ ջուր, որը օդի 20% հարաբերական խոնավությունն է: Հաշվել խոնավության այն քանակը, որն անհրաժեշտ է օդը հագեցնելու համար:	Ուսումնասիրված նյութն ամրապնդելու համար սովորողները ներկայացնում են իրենց աշխատանքները՝ (պաստառները)՝ բացատրելով և հիմնավորելով այն, ցույց տալով կիրառական կողմերը:
8. Անդրադարձ (2-3 բույսեր)	Ամփոփել դասը՝ վերլուծելով և գնահատելով կատարված աշխատանքը:	Սովորողներին տրվում են հետևյալ հարցերը. - Ո՞րն է դասի թեման, դասի նպատակը: - Ի՞նչ սովորեցիք այսօրվա դասից: - Ի՞նչ դժվարությունների հանդիպեցիք: - Ի՞նչն էր առավել հետաքրքիր:	Պատասխանում են տրվող հարցերին, ներկայացնում առաջարկություններ:
9. Տնային հանձնարարություն (2 բույսեր)	Հանձնարարել տնային առաջադրանքը:	Հանձնարարում է տանն ընթերցել ուսումնառության նոր նյութը, պատասխանել պարագրաֆի վերջում բերված հարցերին, լուծել հետևյալ խնդիրները Խնդիրների լուծում Խնդիր 1. Օրվա ընթացքում օդի ջերմաստիճանի չափումներից ստացվել են - 1°, -4°, -7°, -3°, +7°, +13°, +8°, +3° ցուցանիշները: Գտնել ջերմաստիճանի օրական լայնույթը, միջին, առավելագույն և	Գրանցում են հանձնարարությունները:

		<p>նվազագույն ջերմաստիճանը:</p> <p>Խնդիր 2. Արարատ լեռան գագաթին մթնոլորտային ճնշումը 250 մմ ս. ս. է: Հաշվել նույն պահին Արարատյան դաշտում (ծովի մակարդակից մոտ 800 մ բարձր) մթնոլորտային ճնշումը:</p> <p>Խնդիր 3. Օդի բացարձակ խոնավությունը 15 գ/մ^3 է: Տվյալ ջերմաստիճանում օդը հագեցնելու համար անհրաժեշտ է 30 գ/մ^3 ջրային գոլորշի: Հաշվել օդի հարաբերական խոնավությունը:</p>	
--	--	--	--

ԵՉՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրելով աշխարհագրությունն առարկայի կապը այլ առարկաների հետ՝ մասնավորապես մաթեմատիկայի հետ ինտեգրումը, վկայում ենք այն մասին, որ այն սովորողների մոտ գիտելիք, հմտություն, դիրքորոշում, արժեք և մետաճանաչողություն ձևավորելու լիարժեք միջոց է:

Միջառարկայական համակարգված մոտեցման ներդրումը թույլ է տալիս ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերել, բարձրացնել սովորողի ինտելեկտուալ մակարդակը, ավելացնել նրա հետաքրքրությունն ուսման նկատմամբ, ընդլայնել մտահորիզոնը և զարգացնել դպրոցականների պոտենցիալ հնարավորությունները: Միջառարկայական կապերով հագեցած ինտեգրված դասեր անցկացնելիս ավելի հաջող է լուծվում տարբեր ունակություններով երեխաների ուսուցման անհատական տարբերակված մոտեցման խնդիրը: Օրինակ, վերցնելով ընդամենը մեկ տերմին, «երկաթ», սովորողները կարող են տալ այս բառի տարատեսակ բացատրություններ, կապելով այն տարբեր բնագավառների հետ՝ քիմիա, կենսաբանություն, աշխարհագրություն, տնտեսագիտություն և շատ այլ ոլորտներ, որտեղ օգտագործվում է երկաթը:⁶

Ինտեգրված դասերը երեխաներին դուր է գալիս: Դրանք հետաքրքրություն են առաջացնում գիտելիքների նկատմամբ, տալիս են շատ նոր, օգտակար գիտելիքներ, պարունակում են մեծ հուզական լիցք: Այդ դասերն օգնում են բանավոր խոսքի զարգացման և բառապաշարի հարստացման կարևոր գործին, ձևավորում են գեղագիտական ճաշակ, բնության գեղեցկությունն ու հարստությունը, ստեղծագործական ներուժը հասկանալու և գնահատելու, երևույթները բազմակողմանի ընկալելու ունակություն: Միջառարկայական կապերը ուսուցման գործընթացի կազմակերպման ժամանակ ուսուցման համալիր մոտեցման և կրթության միասնականության ուժեղացման համար անհրաժեշտ պայման են: Սովորողների ուսումնական գործունեության մեջ միջառարկայական կապերի ստեղծումն ու իրականացումը ծառայում է ուսուցման գործընթացի ակտիվացման, գիտելիքների համակարգման, մտածողության ինքնուրույնության և ճանաչողական հետաքրքրության զարգացման համար որպես էական դիդակտիկ պայման: Ուսուցումը լինելով կենդանի գործողություն անընդհատ աճում է, թարմանում, վերագինվում, հագեցնում նորանոր գաղափարներով ու մեթոդներով և հենց

6. ⁶ Մարգարյան Ռ.Գ. «Աշխարհագրական անունների բառարան», Երևան, Տիգրան Մեծ, 2016

ուսուցման այս կարողություններն են, որ թույլ են տալիս հետաքրքրությունն ապահովել յուրաքանչյուր սերնդի համար՝ կախված տվյալ ժամանակաշրջանի պահանջներից, իսկ միջառարկայական կապերով անցկացված դասն ապահովում է գրեթե բոլոր սովորողների մասնակցությունը դասին, նրանց մտքի արագ աճին, 17 տրամաբանության զարգացմանը, իրենց ունեցած գիտելիքների օգտագործմանը և շատ այլ հմտությունների, որոնք կարող են կիրառվել դասի ընթացքում:

Աշխարհագրական գիտելիքները առավել կայուն կարողունակություն են դառնում այն դեպքում, երբ զուգակցվում են տարբեր առարկաների գիտական վկայություններով: Միջառարկայական կապերի ուսումնական ակտիվ ինտեգրացումը և փոխադարձ կապերի վերհանումը նպաստում են ոչ միայն առանձին առարկարկայական ուղղությունների արդյունավետ ուսուցմանը, այլև կարևոր աշխարհայացքային ու գիտաուսումնական խնդիր են լուծում: Իրականացվող ուսուցումը կլինի ավելի մատչելի, ավելի մոտ կյանքին ու պրակտիկային, հետևաբար՝ ավելի կիրառելի ու պահանջված, որն էլ ժամամանակակից կրթությանը ներկայացվող հիմնական պահանջներից է:

Գրականության ցանկ

1. Կառուցողական կրթության հիմունքները և մեթոդները (ձեռնարկ ուսուցիչների համար), Ե.- 2004., էջ 42
2. Խաչատրյան Ա.Շ. «Աշխարհագրություն խնդրագիրք», Երևան, «Արևիկ», 2012
3. Մկրտչյան Գ.Պ.Փանոսյան Ա.Լ. «Աշխարհագրություն», Տեղեկատվաաղյուսակներ, տերմիններ, Երևան, «Անտարես», 2009
4. Մարգարյան Ռ.Գ. «Աշխարհագրական անունների բառարան», Երևան, Տիգրան Մեծ, 2016
5. Գրիգորյան Ա.Պողոսյան Վ., «Բնագիտություն», Երևան, «Արևիկ», 2007
6. «Բնագետ» հանդես Երևան «Անտարես» 2019